

Հստակ ցուցում ունենք վարչապետից՝ որևէ պարագայում նախկին տխրահռչակ պրակտիկան չկիրառել. Կոտայքի մարզպետի գործնական և անձնական առօրյան

Հեղինակ՝ Նելլի Մարգարյան

Aysor.am

Նոր Հայաստանի նոր իշխանությունը ձևավորում են գրեթե միայն Քաղաքացիական պայմանագիր կուսակցության անդամները, կամ, ինչպես հանրության շրջանակներում են հայտնի՝ թավշյա հեղափոխության «մեղավորները»: Նախկին գործընկերներից ի՞նչ ժառանգություն են ստացել, ի՞նչ խնդիրներ ու բացթողումներ, չարաշահումներ ու գուցե առավելություններ են հայտնաբերել նոր պաշտոնյաները: Չկա՞ արդյոք մտավախություն, որ արդեն իսկ պաշտոնական մենաշնորհ ձևավորող իշխանական կուսակցությունը կշարունակի նախկինների՝ իր կողմից մատնանշած արատավոր քաղաքականությունը:

«Իշխանության դեմքը» խորագրի ներքո Aysor.am-ը շարունակում է ընթերցողին ներկայացնել մերօրյա պաշտոնյաներին: Արդեն շուրջ մեկ ամիս է՝ Կոտայքի մարզը ղեկավարում է ծնունդով տավուշեցի Ռոմանոս Պետրոսյանը: 39-ամյա մարզպետը մեզ հետ զրույցում անկեղծացել է ոչ միայն գործնական բացահայտումներով, այլև՝ անձնական կյանքին վերաբերող հարցերով: Ի դեպ, մեկ հարցում նա հաստատ կհիասթափեցնի շատերին. ի տարբերություն նրա, որ այս օրերին յուրաքանչյուր երկրորդ հայ հետևում է ֆուտբոլի աշխարհի խաղերին, Ռոմանոս Պետրոսյանը զերծ է մնում ֆուտբոլային հրավառությունից:

Մանրամասները՝ սկզբնաղբյուր կայքում:

<https://www.aysor.am/am/news/2018/07/12/%D5%8C%D5%B8%D5%B4%D5%A1%D5%B6%D5%B8%D5%BD-%D5%8A%D5%A5%D5%BF%D6%80%D5%B8%D5%BD%D5%B5%D5%A1%D5%B6/1441603?fbclid=IwAR1wYWNWBTv8pkBjP-Jwn4VA4H0Sy6dMq2OysCfbHM24no1-dIdKJhtcl8I>